

ԲԱՆԱՎԵՑ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՏՂԱ

3. Ղ ՄԻՐՉՈՑԱՆ

Հայ գրականության պատմությանը քիչ թե շատ ծանոթ ընթերցողին չի զարմացնի հայ քերթության երկու հսկաների առնչակցության գաղափարը, քանզի Նարեկացու Մատյանի կենսագրությունից հայտնի է, որ հնագույն ձեռագիրն ընդօրինակվել է 1173 թ., որի պատվիրատուն եղել է XII դարի ականավոր մտածող Ներսես Լամբրոնացին: Գաղտնիք չէ և այն, որ Լամբրոնացին արյունակցական կապ ուներ Գրիգոր Տղայի հետ: Եվ եթե Գրիգոր Տղայի մեծանուն հորեղբայր Ներսես Ծնորհալին Լամբրոնացուն դեռ 16-ամյա հասակում՝ 1169 թ., ձեռնադրել էր վարդապետ, ապա Ծնորհալուն հաջորդած կաթողիկոս Գրիգոր Տղան ընդամենը վեց տարի անց՝ 1175 թ., Լամբրոնացուն ձեռնադրել էր եպիսկոպոս, նշանակել թեմի առաջնորդ և մինչև իր կյանքի վերջը՝ 1193 թ., աջակցել ու հովանավորել նրան: Իր հերթին Լամբրոնացին եղել էր Գրիգոր Տղայի գաղափարակիցն ու «աջ բազուկը»:

Այն փաստը, որ Ներսես Լամբրոնացին 20-ամյա հասակում ընդօրինակել է տվել Նարեկացու Մատյանը և անձամբ գրել նրա վարքը, ինքնին հուշում է, որ Գրիգոր Տղան նույնպես պետք է քաջածանոթ լիներ Նարեկացու Մատյանին ու մատենագրական ծառանգությանը: Բացառված չէ, որ հենց նա է Լամբրոնացու ուշադրությունը հրավիրել Մատյանի վրա, որովհետև Գրիգոր Տղան հայ մշակույթի պատմության մեջ փայլուն էջեր է թողել ոչ միայն սեփական ստեղծագործություններով, այլև որպես մեկենաս ու բարերար: «Այս առումով, - գրում է Աս. Մնացականյանը, - նաև նրա անվան հետ են կապվում մի շարք մեծարժեք ստեղծագործություններ, ինչպիսիք են, օրինակ, Մխիթար Գոշի դասաստանագիրքը, Մխիթար Հերացու Ջերմանց մխիթարությունը, Սամվել Անեցու պատմական երկը և շատ ուրիշ գործեր»:

Որ իսկապես Գրիգոր Տղան քաջածանոթ է եղել Նարեկացու Մատյանին ու մատենագրական ծառանգությանը, վեր է կանկածից, որովհետև, ինչպես ցույց է տվել Աս. Մնացականյանը, նա ոչ միայն ազդվել է Նարեկացուց, այլև նրա մամուլությամբ ստեղծել հինգ քերթվածից բաղկացած իր ողբաշարքը, որը հետագոտողն անվանում է «մի պոեմ»¹: Թե որքանով է Գրիգոր Տղան կրել Նարեկացու գաղափարական ու գեղարվեստական ազդեցությունը, ներկա դեպքում դա չէ, որ հետաքրքրում է մեզ, այլ այն, որ Գրիգոր Տղան, անհամեմատ մոտ լինելով Նարեկացուն, որպես մշակութային նույն մթնոլորտում սնված ու դաստիարակված ստեղծագործող, լավատեղյակ է եղել ինքնակենսագրական փաստերը ծածկագրելու՝ միջնադարում լայնորեն կիրառվող միջոցներին և,

¹ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ Ա. Ծ. Մնացականյանի, Եր., 1972, էջ 175 (այսուհետև այս գրքից մեջբերումներ կատարելիս տեքստում փակագծերի մեջ, նշելու ենք միայն էջը):

² Տե՛ս նույն տեղում, էջ 119: Ի դեպ, վիճելի է ոչ միայն դրանց մեկ միասնական ստեղծագործություն լինելու, այլև քանակի՝ հինգ թե վեց, հարցը (տե՛ս Ա. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Եր., 1985, էջ 44):

³ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների վերծանության փորձ, ԲԵՀ, 2002, թիվ 3:

ամենայն հավանականությամբ, հասկացել է Նարեկացու ծածկագրություններից շատերն ու դրանց նմանությամբ ինքը նույնպես ծածկագրել է ինքնակենսագրական մի շարք փաստեր:

Իսկ ինչի՞ց է դա երևում:

1. Ինչպես ցույց ենք տվել մեր նախորդ հոդվածներից մեկում⁴, Գրիգոր Նարեկացին Մատյանն ավարտել է 58-ամյա տարիքում: Ըստ երևույթին այդ փաստը հայտնի է եղել նաև Գրիգոր Տղային և, ասես ոգևորվելով իր մեծ նախորդի օրինակից, ճիշտ 58-ամյա հասակում գրիչ է վերցրել և ստեղծել նույն ժանրի իր մեծարժեք ողբաշարքը: Ընդ որում, Մատյանը Նարեկացու համար հերթական ստեղծագործություն էր, իսկ Գրիգոր Տղայի ողբաշարքը՝ ստեղծագործական առաջնել, բայց երկուսն էլ, իրենց ստեղծագործությունը նվիրաբերելով Աստծուն, դա ձևակերպել են գրեթե նույն բանաձևով: Ըստ այդմ, եթե Նարեկացին գրում է. «Արդ, գյարմարութիւն պաշտաման բանիս // Ի խայրեաց հոգոյս քեզ նուիրելոյ, արհնեալ բարեգութ» (ԼԳ, տ. 1-2), ապա Գրիգոր Տղան, ծածկագրելով իր 58-ամյա տարիքը, ասում է, որ իբրև «...ընծայ և նուէր / Երախայրեաց Տեսունդ մատուցի» (էջ 402): Կարծում են, նմանությունն ակնհայտ է:

2. Նշված հոդվածում վերծանելով Նարեկի ԽԶ գլխի Բ հատվածի ծածկագրությունը՝ ցույց են տվել, որ Նարեկացին ծնվել է 945 թ.: Միշտ է, ընդդիմախոսներս, հիմք ընդունելով այն փաստը, որ Մատյանի գիտական հրատարակության մեջ այդ գլխի 25-րդ թվահամարով տողն իր տեղում չէ, փորձեցին մերժել վերծանությանն ճշմարտացիությունը⁵, բայց ես մնում եմ նույն կարծիքին: Իսկ թե ինչու, ներկա դեպքում ցանկանում եմ ասել միայն, որ խնդրո առարկա հատվածում ծածկագրության գոյության մասին վկայում են ոչ միայն նրանում առկա թվական միավորները, այլև հատկապես բանաստեղծի հետևյալ երկու տողը՝ «Իսկ թարգմանութիւնք սոցին տեսութեան ի քեզ են նկարեալ / Իբր յարձանի անջնջականի, անձն իմ եղկելի» (տ. 38-39, ընդգծ. իմն է,- Ն. Մ.): Փաստորեն Նարեկացին ուղղակիորեն ասում է, որ գրվածը վերաբերում է հենց իր անձին, որը նա համեստաբար անվանում է «եղկելի», այսինքն՝ ողորմելի: Բարեբախտաբար Գրիգոր Տղայի՝ մեզ հետաքրքրող ողբաշարքի հիմնգրորդ ստեղծագործության մեջ հեղինակը, ծածկագրելով դրա ավարտման թվականը, գործածել է նույն արտահայտությունը՝ հասկացնելու համար, որ ասվածը կապ ունի իր անձի հետ: Ահա այդ հատվածը. «Եւ թէ ի բազմէն հնգիւ պակասեալ, տասանց նուագեալ, / Ի քսան հանկուցեալ, ի տասն առկցեալ: /Զոր և չունիմ ինչ ասել թշուառականիս անձին եղկելոյ» (էջ 401, ընդգծ. իմն է,- Ն. Մ.):

Քանի որ այս ծածկագրությունը բացված է Գրիգոր Տղայի մասին իմ հոդվածում⁵, ուստի հարկ են համարում ասել միայն, որ ներկա հոդվածի առիթով նորից ուսումնասիրելով նրա ողբաշարքը՝ նկատեցի այնպիսի մանրամասներ ու նրբություններ, որոնք նախկինում չէի տեսել, մինչդեռ դրանք, կարծում եմ, շատ կարևոր են ինչպես ընդհանրապես նման կարգի ծածկագրություններն ու առհասարակ միջնադարյան մտածողության ինչ-ինչ առանձնահատկություններ հասկանալու, այնպես էլ մասամբ Նարեկի գաղտնագրությունները վերծանելու առումով: Ինչպես դժվար չէ տեսնել, բերված հատվածում թվարկված թվաբանական բոլոր գործողությունները վերաբերում են «բազմէն» բառին: Իսկ որ անչափ հետաքրքրական է. ընթերցողի ուշադրությունը դրա վրա սևեռելու համար 58-ամյա կաթողիկոս բանաստեղծը նույն բառը նույն համատեքստում օգտագործել է երկու անգամ՝ մեկ ուղիղ ու անորոշ իմաստով, որպես բազում, շատ, մեկից ավելի, իսկ

⁴ Տե՛ս «Գրական թերթ», 13 հունիսի, 2003 թ., էջ 6-7:

⁵ Ն. Ղ. Միրզոյան, Նորահայտ փաստեր Գրիգոր Տղայի կյանքի և գործունեության մասին, ԲԵՂ, 1996, թիվ 3:

մյուս դեպքում որոշակիացրել է այն՝ Գևառի ունենալով նրա տառերի թվային արժեքները: Ըստ այդմ գրել է.

Ջոր և թէ սակաւ խուն ինչ ի բազմէն մասն յտառտէն,
Բաժին մի վտիտ սերմանս ազագուն, բոյսս սինըքոր,
Փխրան մի փոքու, դոյզն շիփորայ չնչին միակի,
Նշխար ինչ մասին և շիթս անձրևոյ կամ կաթ

մի ցողոյ:

Եւ թէ ի բազմէն հնգիս պակասեալ, տասանց
նուազեալ,

Ի քսան հանկուցեալ, ի տասն առկցեալ:

Ջոր և չունիմ ինչ ասել թշուառականիս անձին
եղկելոյ,

Եղեռնագործի և թարմատարի. եթէ և յասմանէ
Վրիպիցիմ, քանզի զինչ ինձ վատթարութիւն
անհանձար

Կուրիս խունապման արդեօք չարութեան
այսր պակասման...

Ընդգծված տողով բանաստեղծը շատ հստակ ասում է, որ խոսքը վերաբերում է հենց իրեն: Թվում է՝ նույնիսկ ավելորդ է ասել, որ «թշուառականիս անձին եղկելոյ» բառակապակցությունը ըստ էության Նարեկացու Մատյանի ԽԶ գլխից քաղված երկտողի «անձն իմ եղկելի» բառերի ձևափոխված կրկնությունն է: Ակնհայտ է, որ կաթողիկոս բանաստեղծը դրանով հուշում է իր անձին վերաբերող ծածկագրության մասին: Փաստորեն Նարեկացին նույնպես հուշել կամ ակնարկել է իր անձին վերաբերող ծածկագրության գոյության մասին, որը հասկացել ու ընդօրինակել է նաև Գրիգոր Տղան:

3. Պակաս կարևոր չէ և այն, որ նույն հատվածի անմիջական շարունակության մեջ Գրիգոր Տղան գրում է.

Որով և թէ գործք բարեաց հեռացան, փախեան
և արշաւեցին

Ջանքան ընթացումն, սակայն այսուիկ չափով
զգայութեամբք

Բոլոր իմովս անդամօք խաբեալս և պատրեալս,
Ի հիզոյն հէզս. կափուցեալ մտօք, կուրացեալ

հոգւով,

Խաւարեալ անձամբ, մրճոտեալ սրտիս, յիմարեալ
բնութեամբ.

Մթնացեալ ստուերաւ, հեշտացեալ, մրեալ,
մղեղեալ

Եւ յաղջամուղջս տատանեալ,

Այլ և բոլորովին մասնիկովք իմովք երերեալ,
Կացեալ առաջի հեզոյդ և սրբոյդ մարդասիրիդ

Եւ բարերարիդ ողորմածիդ և պարգևողիդ,
Ժտեմ և հայցեմ առնույ, որ ձրի տաս ամենեցուն,

Առեալ ընդ իմ զասացեալքս թի՛ զհինգս
հնգիք բարդեալ

Եւ ունակացն երկուց միակաց ըստ եզականին
ենթակայից նոցին կրողաց,

**Որ և թուով երկոտասանք բերեալ տեսանին
ընծայ և նուէր**

Երախայրեաց Տեառնդ մատուցի,

**Այլ և խունկ անուշահոտ, պատարագ ընդունելի,
հատ յիշատակաց,**

Պտուղ քաղցրաճաշակ, սերմ բարութեան,

Ողկոյզ բարունակատուր, ողջակէզ խորհրդական,

**Հաց կենդանական՝ ի քէն ընկալեալ և
քեզ մատուցեալ:**

Կարծում եմ՝ դժվար չէ տեսնել, որ 58-ամյա կաթողիկոս բանաստեղծը, սեղմ գծերով տալով իր ֆիզիկական ու հոգեմտավոր վիճակի բնութագիրը, այնուհետև խոսքն ուղղում է Աստծուն և հանկարծակի ընդհատում այն՝ ընդմիջարկելով ինքնակենսագրական, այսինքն՝ իր տարիքը՝ 58, նշող նոր ծածկագրությամբ, որից հետո շարունակում է ընդհատված տեղից: Գրեթե նույնն ենք տեսնում նաև Նարեկացու Մատյանի ԻԶ գլխում, ուր կարդում ենք.

Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ ի տուծի,

Ես ապիկար՝ մատնեալ անարժան գործովքս յիրաւի,

Վատնիչ արքունի գանձուց՝ կրկնադատ եւ անթօսիելի,

Պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի,

Բիր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի:

Անբարեխաւս կապեալ՝ ի պահեստ դառն արգելանի,

Հեծումն եւ վաստակ ցաւոց՝ ճաշակեալ յանճշոյլ բանտի,

Անապաւէն տանջեալ՝ անթոշակ կա՛մ ողորմելի,

Այլ յեղանակ ինձ ողբականաց աստուտ կնքեցի,

Փոխատրեցի սովին բարբառով կոծ կսկծելի,

Կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի՝

Անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի:

Աղքատութեանն հնոց յամենուտ մասանց մրրկի,

Անպատասպար թշուառ՝ վտանգեալ սրտի ի գրաւի,

Տարակուսեալ հոգով՝ ապաշնորհ այր ի վրիպակի,

Անխնամելի հայցմամբ դատաստանն յինէն պահանջի,

Մեղաց և մահու զինուք զգայարան գաղտնեացս խոցի,

Անհրկելի մատնեալ բոնութեան չարեացս գերի,

Սուր սուսերաւ սաստից գոյութիւն բնութեանս յաւշատի:

Յիշատակաւ բեմին՝ աստուտին ի դատաստանի,

Անծագելի մոայլ՝ չարատես աշացս երելի,

Անձեռնկալ կապեալ՝ եղկելիս ի տարակուսի,

Ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի,

Յոյժ անարեւ եւ անվերարկու՝ ի տարտարոսի,

Անապաւէն մոլար՝ մորմոքեալ ի հուր գեհեհնի,

Անյայտնելի կորուստ՝ կործանեալ ի մեղաց վրի:

Բանաստեղծը պարզ ասում է, որ այս ամբողջ հատվածը վերաբերում է իրեն, քանզի ներկայացնում է իր հոգեկան ծանր ապրումները, բայց հանկարծ փոխվում է խոսքի տոնը, որովհետև ընդգծված քառատողով ասես ընդմիջվում է խոսքի տրամաբանությունը և վերսկսվում է միայն դրանց հաջորդող «Աղքատութեանն հնոց յամենուտ մասանց մրրկի» տողով, որը տրամաբանորեն կապված է ընդգծված քառատողին նախորդող «Անապաւէն տանջեալ՝ անթոշակ կա՛մ ողորմելի» տողի հետ: Եթե ընդգծված քառատողը չենք դիտում որպես ծածկա-

գրության համար հորինված, ապա կանգնում ենք շատ լուրջ դժվարության առջև. մի՞թե հանճարեղ բանաստեղծը, ընդհատելով իր խոսքի տրամաբանական ընթացքը, հենց այնպես տողեր է հորինել հիրավի հանճարեղ ստեղծագործության մեջ: Չէ՞ որ, եթե ընդգծված քառատողի առաջին երկու տողը դեռ ինչ-որ չափով կարելի է դիտել որպես բանաստեղծի հոգեկան ծանր վիճակի արտահայտություն, ապա վերջին երկտողը՝ «Կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի՝ / Անհատական թի խորհրդական երկեակ տասնեկի», ոչ մի նման բան չի հուշում և ըստ էության մնում է որպես հանգի ու վանկի համար հորինված: Իսկ այդպես մտածել, նշանակում է մեղք գործել Նարեկացու հանդեպ, քանզի նա ոչ թե տող, այլ բառ ու տառ չի հորինել հենց այնպես: Ուրեմն, մնում է իսկապես ընդունել, որ տվյալ դեպքում գործ ունենք ծածկագրության՝ հետ:

4. Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Տղայի ստեղծագործություններից վերը բերված հատվածների համեմատությունից պարզվում է, թե ինչու Գրիգոր Տղայի պարապայում ծածկագրության գոյությունն ակնհայտ է, իսկ Նարեկացու դեպքում մնում է աննկատ: Բանն այն է, որ Գրիգոր Տղան Աստծու հետ ունեցած իր խոսակցությունն է ընդմիջարկել ինքնակենսագրական ծածկագրությամբ, մինչդեռ Գրիգոր Նարեկացին դա արել է իր հոգեկան ծանր ապրումներն ու զգացումները նկարագրելիս: Հարկավ, այդ տարբերությունն արդյունք է նաև նրանց բանաստեղծական օժտվածության ու վարպետության տարբերության: Վերջապես, կար նաև մեկ այլ հանգամանք. Նարեկացին ըստ էության հանդես էր գալիս որպես նորարար ու սկզբնավորող, իսկ Գրիգոր Տղան՝ որպես նրա աշակերտ ու շարունակող: Ասվածն ավելի պարզ կդառնա Գրիգոր Տղայից վերը բերված հատվածի անմիջական շարունակությունն ընթերցելիս: Բանաստեղծը գրում է.

Եւ արդ ահա կրկնեալ զսոսա,
 Ըստ թուոյ եզականաց խորհրդոց աշակերտացն,
 Հանդերձ վերնայարկ երկնից կամարացն
 խորանացն բնակաց:
 Հրեշտակերամ դասուց երջանկացն
 Եւ զգայական վերնակառոյց եթերընթաց
 լուսալծակացն
 Արփիաճաճանչ նորին զարդեկաց:
 Այլ և երկնայնովքս նմին յատակի բուսօք
 Եւ տնկօք սորայս բողբոջի:
 Առ քեզ բարեխօս բերեալ կացուցի երից տասանց
 թուոց
 Միակաց խառնալ ընդ սոսա, զոր աստ բնականք,
 Այլ և զանբանից հոյլս կենդանեաց,
 Մի՞ թողցես զառ ի քոյդ ծնեալքս յարգանդէ
 Դարձեալ վերստին
 Ծնունդ լինել չարաբաստ իժին հպարտի:
 Մի՞ տայցես թոյլ՝ որդոցս տուրնջեան և լուսոյ՝
 Դարձեալ վերստին որդիս լինել խաւարի և միգապատ՝
 ամպրոպաց մրրկի:
 Եւ մի՞ զմի անգամ ազատեալքս արեամբ քո սրբով
 Դարձեալ ներես ծառայ լինել վերստին չարագոյն
 ախտից խաթօղին:

* Վերծանությունը տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների..., էջ 69-70:

Բերված հատվածում Գրիգոր Տղան իրար ետևից երկու տարբեր ձևերով գաղտնագրել է իր տարիքը՝ 58⁷, բայց ամենից ուշագրավն այն է, որ եթե Նարեկացին ասում է. «Կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի», ապա Գրիգոր Տղան գրում է. «Եւ արդ անա կրկնեալ զսոսա»:

5. Ավելին, Նարեկացին հաջորդ տողում արդեն կարծես հենց այնպես ավելացնում է. «Անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի», որը մենք վերծանել ենք որպես 20-ի մեջ եղած անբաժանելի (անհատական) կենտ թվերի գումար ($1+3+7+11+13+17+19=76$)⁸: Մինչդեռ Գրիգոր Տղան, ի շարս ծածկագրված այլ թվերի, ավելացնում է.

**Առ քեզ բարեխօս բերեալ կացուցի երից տասանց թոնց
Միակաց խառնեալ ընդ սոսա, զոր աստ բնականք:**

Ներկա դեպքում Գրիգոր Տղայի «...երից տասանց թոնց / Միակաց... զոր աստ բնականք» բառերը են հասկանում ու մեկնաբանում են որպես 13-ի մեջ եղած կենտ անբաժանելի բնական թվերի գումար, այսինքն՝ $1+3+5+7+11+13$, որը հավասար է 40-ի: Այս դեպքում ոչ մի կասկածի տեղ չի մնում, որովհետև կաթողիկոս բանաստեղծը նույն թիվը՝ 58-ը, ծածկագրել է երեք տարբեր ձևերով, և հնարավորություն ունենք մեկը մյուսով ճշգրտելու: Կարծում են՝ ասվածից իրավունք ունեն եզրակացնելու, որ Գրիգոր Տղան տվյալ դեպքում հետևում է Նարեկացուն, իսկ դա նշանակում է, որ ինձնից ուղիղ 820 տարի առաջ նա փաստորեն վերծանել է Նարեկացու թեկուզև խնդրո առարկա ծածկագրությունը և դրա օրինակով ստեղծել իր այս ծածկագրությունը: Հարկավ, կան այլ ընդհանուր տեղիներ ու նշաններ հօգուտ մեր այս պնդման, որոնց բոլորին անդրադառնալ չեմ կարող, բայց կցանականալի ուշադրություն դարձնել դրանցից 1-2-ին:

6. Նարեկացու Մատյանից վերը բերված հատվածի ընդգծված քառատողի հենց հաջորդ տողում կարդում ենք. «Աղքատութեանն հնոց յամենուստ մասանց մրրկի», իսկ Գրիգոր Տղայի խնդրո առարկա ծածկագրությանը հաջորդող 6-րդ (բուն տեքստում տե՛ս տող 225) տողում գրված է. «Դարձեալ վերստին որդիս լինել խաւարի և միգապատ ամպրոպաց մրրկի»:

7. Մեկ այլ կարևոր հանգամանք ևս. վերը մենք արդեն տեսանք, որ Գրիգոր Տղան առաջին ծածկագրությունից հետո միանգամից նկարագրում է իր ֆիզիկական ու հոգեմտավոր վիճակը: Նարեկացին, ընդհակառակը, Մատյանի ԻԶ գլխում ներկայացնում է այդ պահին իր ունեցած հոգեական ծանր ապրումները, իսկ ԻԹ գլխում, որի 29-րդ տողը՝ «Քանզի իննուց յիսնից եւ թոնց երից եւ չորեակ տասանց», փաստորեն նույնպես ծածկագրություն⁹ է, նկարչական արտահայտչականությամբ գծագրում է իր ֆիզիկականը՝ հարկավ չանտեսելով նաև բարոյահոգեբանական վիճակը.

**Ահա այս կերպարանք ճշգրտագոյնք պարտաւորիս
յանդիմանութեան.
Տխոր դէմք, քաղեալ ճաճանչ, ցամաքեալ խոնարութիւն,
երիթացեալ շուրթն,**

⁷ Մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նորահայտ փաստեր..., էջ 81:

⁸ Մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների..., էջ 69-70:

⁹ Այս ծածկագրության վերծանության փորձերի մասին տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 1032-1034, նաև՝ Ն. Ղազարյան, Ինքնակենսագրական նորահայտ փաստեր Գրիգոր Նարեկացու մասին, Բե՛շ, 2002, թիվ 3:

Անշքեալ տիպ, տրտմեցեալ ոգի, այլալեալ ձայն, կրկնեալ
 պարանոց:
 Եւ զի թէ ոք զհսկութիւնն իսկ Աշանակեսցէ՝ ոչ անաւրինէ.
 Անամբարտաւան միտ, անհպարտ սիրտ, անխնդրող պարգեւի
 թշուառ,
 Անաղերսալի պասքեալ, ինքնակշտամբելի դեգերեալ,
 Իրաւամերժ սովեալ, արդարալլուկ քաղցեալ,
 Պատշաճադատ հարուածեալ, ինքնավկայ մահապարտեալ,
 Արժանապէս հանեալ, անձնանէծ եղկելի:
 Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին
 կշտամբեալ
 Եւ մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ:

Թեև շատ է խոսվել ու գրվել Նարեկացու լեզվի և հատկապես նրա բառապաշարի զարմանահրաշ հարստության մասին, բայց և այնպես, ի հաստատումն այդ ամենի, հարկ եմ համարում ասել, որ Մատյանի այս փոքրիկ ենթագլխից ՆԲՀ-ում տրված է 13 բառ, որոնցից 11-ի համար օրինակներ են վերցված միայն հենց այս ենթագլխից:

8. Որ Գրիգոր Տղան ոչ միայն քաջածանոթ է եղել Նարեկացու Մատյանին, այլև շատ դեպքերում օգտվել է նրանից, ունենք մեկ այլ կարևոր փաստ ևս. հայտնի է, որ Նարեկացին Մատյանի ԻԷ բանի Բ և Ե ենթագլուխներում մեղայ բառով սկսում ու ավարտում է համապատասխանաբար՝ 11 և 7 տող: Պարզվում է, որ Գրիգոր Տղան նույնպես իր ողբաշարքի հենց առաջին ստեղծագործության մեջ ուղիղ 18 տող սկսում ու ավարտում է նույն մեղայ բառով: Համեմատության համար բերենք այդ հատվածներից մի քանի տող:

Գրիգոր Նարեկացի

Մեղա՛յ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ,
 Մեղա՛յ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ,
 Մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ,
 Մեղա՛յ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ,
 Մեղա՛յ ստացողիդ յշէութենէ, ստուգապէս մեղայ,
 Մեղա՛յ գերունակ գոգոյդ գրգանաց, անբաւս մեղայ,
 Մեղա՛յ աննուագ լուսոյդ վայելման, նենգողս մեղայ,
 Մեղա՛յ ճաշակման անճառդ կենաց, բազումս մեղայ...

Գրիգոր Տղա

Ասացից մեղա՛յ քեզ, հայր, յերկինս և յերկրի,
 Մեղա՛յ և առաւելապէս մեղա՛յ.
 Մեղա՛յ և առաջի հրեշտակաց մեղա՛յ,
 Մեղա՛յ և յանդիման արեգական մեղա՛յ,
 Մեղա՛յ և առ երեսս երկրի մեղա՛յ,
 Մեղա՛յ և խայտառականօք մեղա՛յ,
 Մեղա՛յ և անաչառ մեղա՛յ,
 Մեղա՛յ և անպատկառապէս մեղա՛յ,
 Մեղա՛յ և կենդանացուցչիդ զիս, մեղա՛յ... (էջ 348):

Անկախ այն բանից, թե այս հատվածներն իրենց բովանդակությամբ ու կառուցվածքով որքանով են նման իրար, մեկ բան ակնհայտ է՝ երկուսն էլ ունեն մե-

դայ-ով սկսվող ու վերջացող 18-ական տող: Հարց է ծագում. արդյոք չկա՞ այստեղ որևէ խորհուրդ կամ գաղտնիք, որն առայժմ անհայտ է մնում մեզ: Ավելին՝ թե՛ մեկի և թե՛ մյուսի երկուս հանդիպում են այնպիսի մտքեր, որոնք թերևս իրենց թվացել են հանրահայտ ու մատչելի, մինչդեռ այսօր դրանք դարձել են անհասկանալի: Չմտածե՞լ արդյոք, որ միջնադարն ու միջնադարյան մտածողությունն ինքնին վերցրած անհամեմատ ավելի հարուստ ու տարողունակ են, քան դրանց մասին մեր ունեցած գիտելիքներն ու առավել ևս՝ մտածողությունը: Ի հաստատումն իմ այս եզրակացության՝ բերեմ միայն մեկ օրինակ: Խնդրո՞ւ առարկա ստեղծագործության մեջ Գրիգոր Տղան գրում է.

Դու ես, արդեօք,
Որ գներողութիւնդ առ աստկութեանն խառնեալ,
Պահեցէր զՆոյ կթներորդօքն ի ջրհեղեղէ անտի՝
Արձան աշխարհի.
Խնամ արկեա և որ յիս ութերորդք գոյացութիւնք
Եւ նոցին առաքինութիւնք՝ հանդերձ մասամբ
տրամադրելոցն,
Որ է յայտնի քաջ իմաստնոց,
Եւ գոր նոցին ներհակք նովին թուով բաժանեալք
Ի ծովացեալ իմոյս աշխարհաւէր կամաց
բարձրացեալ կոհակք՝ նահանջեալ,
Ի սէր քո ցամաքեցո,
Զի խաղացից վիշապաւն որպէս ձագով (էջ 339):

Այստեղ կաթողիկոս բանաստեղծը ծածկագրել է ինքնակենսագրական ինչ-որ փաստ՝ գործածելով թվաբանական գործողություններ ու հասկացություններ, որոնք հայտարարում է «յայտնի քաջ իմաստնոց», մինչդեռ պարզվում է, որ այսօր դրանք բնավ էլ հայտնի չեն:

Ներկա հոդվածում նպատակ չունենալով զբաղվելու մեղային վերաբերող հատվածների մանրագնին համեմատությամբ ու վերլուծությամբ՝ ասեմ միայն, որ դրանց ամենահիմնական տարբերությունը Նարեկացու մեղայի-ի անկեղծությունն ու ինքնախարագանող բնույթն է:

Ավելին, թեև բերված հատվածներում գրեթե չկան նույնական բառեր, բառակապակցություններ ու տողեր, բացի մեղայ-ներից, սակայն Գրիգոր Տղայի նույն ստեղծագործության այլ տեղերում հանդիպում են նարեկյան մեղայ-ով առանձին արտահայտություններ: Օրինակ, Նարեկացու «յայտնապէս մեղայ» (տ. 14), «ստուգապէս մեղայ» (տ. 15), «անբաւս մեղայ» (տ. 16), «բազումս մեղայ» (տ. 18), «իսկապէս մեղայ» (տ. 21) արտահայտությունների դիմաց Գրիգոր Տղան համապատասխանաբար ունի՝ «մեղա՛յ յայտնապէս» (տ. 80), «մեղա՛յ ստուգապէս» (տ. 78, ունի նաև՝ «ստուգապէս մեղայ», տ. 94), «անթիւ մեղա՛յ» (տ. 84), «բազմապատիկ մեղա՛յ» (տ. 73), «ճշմարտապէս մեղա՛յ» (տ. 77):

Ուշադրության արժանի մեկ այլ պարագա ևս. եթե Գրիգոր Նարեկացու Մատնանին Գրիգոր Տղայի ծանոթությունը հաստատող մինչև այժմ մեր բերած փաստերը ընթերցողին դեռ ինչ-որ իմաստով կարող էին թվալ տարակուսելի ու ոչ անառարկելի, ապա Գրիգոր Տղայի խնդրո՞ւ առարկա ստեղծագործության մեջ կա մեկ հատված, որը, իմ խորին համոզմամբ, գալիս է փարատելու մնան կարգի ամեն կասկած ու թերահավատություն: Բանն այն է, որ կրկնակի մեղայ-ով տողերն ավարտելուց հետո բանաստեղծը գրում է.

Արդ, բոլորելով զմեղայիս պտուղ սերմանեաց,
Ընդ դառն շնչումն թալկացեալ ոգոյս ելողի,

Ի վեր բերելով զոր այն քաղցրութեան
 զմարգիչն իմոյ գթածի
 Զվա՛յն ձայնի կանչողի
 Եւ կողկողագին հայցմամբ, բանի հեծութեան,
 Արտասուաթոր աչօք նկատեալ
 Ամօթապատ ծածկութիւն դիմացս իմոյս
 շառագունեալ թերամիտ տղայի,
 Մինչև հասուցից առ քեզ, թագաւոր արքայ
 Եւ մեծ իսկ Տէր ահաւոր:

Ընդգծված տողերում, իմ կարծիքով, Գրիգոր Տղան ուղղակիորեն ակնարկում է Գրիգոր Նարեկացու մասին, որին անվանում է «զմարգիչն իմոյ գթածի», իսկ սա պետք է հասկանալ ուսուցչի իմաստով, քանզի նախ՝ մարգիչ բառի համար բառարանում կարդում ենք. «Որ մարզէ, կամ ի փորձ մատուցանէ. վարժիչ. հանդիսադիր. ըստ յն. օծիչ»¹⁰ և այլն: Երկրորդ, այդ է հուշում նաև Նարեկացու մի շատ հետաքրքիր վկայությունը. Մատյանից առաջ գրված Առաքելոց ներբողում բանաստեղծը առաքյալներին անվանում է նաև «մարգիչք մարդկան, բովք ընտրութեան, հալոցք հոգւոց», «աստուածացեալք շնորհօք բանին, թագաւորեալք օծութեամբ հոգւոյն, իշխանք պանծացեալք, պետք գլխաւորք, նահապետք վսեմականք, նախարարք նախահոգակք, առաջնորդք բարեշափոյք, որսորդք հմտավարժք», «զմարդկային սրտից անդաստանս հերկագործողք»¹¹ (ընդգծ. իմն է - Լ. Մ.) և այլն:

Մարգչի կամ ուսուցչի մասին իր ակնարկությունը Գրիգոր Տղան մասամբ որոշակիացնում է «Զվա՛յն ձայնի կանչողի» տողով, քանզի Մատյանի Է գլխի Գ ենթագլխում 15 տող սկսվում է վա՛յ-ով: Գրիգոր Տղան նույնպես իր ողբաշարքի առաջին ստեղծագործության մեջ, հետևելով Նարեկացուն, մի քանի տող սկսում է հենց վայ-ով: Այս դեպքում նմանությունն այնքան ակնհայտ է, որ հայ միջնադարյան պոեմի հետազոտող Ա. Մաղոյանը, զարգացնելով նախորդներից, ի մասնավորի Նարեկացուց, Գրիգոր Տղայի ստեղծագործական ինքնուրույնության տեսակետը, գտնում է. «Թերևս իբրև նմանություն կարող են դիտվել մեղաներն ու վայերը»¹² (ընդգծ. հեղ. է - Լ. Մ.):

Գրիգոր Տղան Նարեկացու մասին իր խոսքն ավելի որոշակիացնում է «Եւ կողկողագին հայցմամբ. բանի հեծութեան» տողով, որովհետև, ինչպես գիտենք, Մատյանի սկզբից մինչև վերջ Նարեկացին բազմիցս կրկնում է «կողկողագին» բառը: Բերենք դրանցից մի քանիսը. «Ո՛չ աչս կողկողագինս արտասուաւք ողբոց բարերարիդ յանդիման կացոյց» (ԺԴ, տ. 14), «Որք ըստ ձայնից կողկողանաց» (ԻԶ, տ. 2), «Վական եւ հեծութիւն, հառաչանք կողկողագինք» (ԻԷ, տ. 3), «Այսքանեացս ձայնարկութեանց կողկողագինս հեծեծանաց» (Լ, տ. 97), «Չամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան» (ԼԱ, տ. 35), «Թախանձանաց բանիս երերիմ եւ կողկողագին հեծութեամբ դողամ» (ԿԶ, տ. 177), «Տեսցե՛ս աստանար ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան» (Ղ, տ. 141) և այլն: Եթե այս ամենին ավելացնենք նաև, որ Նարեկացին Մատյանն սկսում է «Չա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի» տողով, ապա, կարծում եմ, պետք է ընդունել, որ Գրիգոր Տղայի խոսքն իսկապես վերաբերում է հենց Գրիգոր Նարեկացուն ու նրա Մատյանին: Դիտելի է և այն պարագան, որ իր խոսքն ուղղելով

¹⁰ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Բ. երկրորդ, Եր., 1981, էջ 224:

¹¹ «Սրբոյն Յօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 426-427:

¹² Ա. Մաղոյան, նշվ. աշխ., էջ 45:

առ Աստված՝ Գրիգոր Տղան «Մինչև փասուցից առ քեզ, թագաւոր արքայ» տողում
նույնությամբ պահպանել է Նարեկացու Մատնանի 5-րդ տողի՝ «Բուրվառաւ կա-
մացս առաքել առ քեզ», վերջին երկու բառը՝ առ քեզ:

Գրիգոր Տղայի ողբերգաշարքից բացի Նարեկացու Մատնանի հետ ակնհայտ
նմանություն ունեն նաև նրա մյուս ստեղծագործությունները: Համեմատության
համար բերենք մեկական հատված.

Գրիգոր Նարեկացի

Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ,
Ռաբբի ուրբի անուանեցայ,
Եւ զգովեստն առ աստուած եղծի,
Բարի ասացայ՝ առ եկկութեանն ժառանգութիւն,
Սուրբ վկայեցայ ի մարդկանէ,
Որ եմ անմաքո՛ւր առաջի աստուծոյ,
Արդար դաւանեցայ ամենայն իրաւք ամբարիշտս,
Հեշտացայ ի զովեստ մարդկան,
Զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի,
Յաւազանէ կոչեցայ Արթուն,
Եւ ես ի քուն մահու ննջեցի,
Ի փրկութեանն ասուր Հսկող յորջորջեցայ,
Բայց զգաստութեանն՝ աչս կափուցի (ՀԲ, տ. 62-74):

Գրիգոր Տղա

Լույս արդ և Տէր անուանեցայ
Եւ խաւարեալ գործով գտայ.
Բաբունի սուրբ վերձայնեցայ
Եւ լռակա գործով ցուցայ:

Եւ ուսուցիչ բազմաց եղայ,
Բայց և ինձէն ոչ խրատեցայ.
Հովի խաշանց ես կոչեցայ
Եւ մոլորեալ օտարացայ,
Առաջնորդ աստ կարգեցայ,
Յուղեղ հետոց խտորեցայ:

Եմ ի յարթուն և ոչ զարթայ,
Հարեալ հոգիս և ոչ զարթեայ.
Բամկականաց ծանակ եղայ,
Եւ ի բազմաց այպանեցայ (էջ 232-233):

Այս ամենից հետո առնվազն տարօրինակ է, որ Գրիգոր Տղան Նարեկացու
անունը չի հիշատակում, մինչդեռ այլ դեպքերում չափածո երկուսն ազատորեն
նշում է այս կամ այն գործչի անունն ու մականունը: Օրինակ՝ «Տեառն Գրիգորի-
սի կաթողիկոսի հայոց, որդւոյ եղբար տեառն Գրիգորիսի եւ Ներսիսի՝ ասա-
ցեալ բան պիտանի ի խնդրոյ Հէթմոյ սեւաստոսի» ստեղծագործության մեջ կար-
դում ենք.

Մի է և այն սուրբ հայկազնի
Մովսէս Քերթող Խորենացի,

Սուրբ և ընտրեալ և հրաշալի,
Մշմարտախօս յիմաստ բանի:

Ջոր և տեսեալ աչօք լինի,
Գրով ցուցցէ ամենայնի,
Համանման մարգարեի,
Ծածկեալ անտեսն առնէ յայտնի:

Սա աստ զորդոցն Արամեանի,
Ջծնընդոցն Թորգոմի
Եւ զցեղիցն Յաբեթի
ՋԱքանազեանն Պարթևի (Էջ 207):

Վերը շարադրվածի արժեքը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է թեկուզ հարևանցի ծանոթանալ Գրիգոր Տղայի կենսագրության որոշ փաստերի: Հայտնի է, որ ապրելով Կիլիկիայի հայոց պետականության երկուքի շրջանում՝ իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղան գործուն մասնակցություն է ունեցել նրա ծննդի դժվարին գործընթացին, հասկանալի է՝ սերտորեն համագործակցելով Լևոն Մեծագործի հետ, իսկ երբեմն էլ հակադրվելով նրան: Վերջին հանգամանքը առանձին հայագետների հիմք է տվել պատմական սկզբնաղբյուրների ինչ-ինչ տեղեկություններից սխալմամբ եզրակացնելու, որ «հավանաբար Գրիգոր Տղան մեռել է անբնական մահով», և որ դրանով մեղք է ունեցել Լևոն Մեծը¹³:

Իր ծավալած հոգևոր ու աշխարհիկ եռանդուն գործունեությամբ Գրիգոր Տղան դեռ կենդանության ժամանակ ձեռք էր բերել միջազգային ճանաչում: Բավական է ասել, որ շուրջ քսանամյա¹⁴ կաթողիկոսության տարիներին նա անակագրական կապեր է ունեցել Բյուզանդական Մանուել և Իսահակ կայսրերի, Միջայել պատրիարքի, Հոռմի Լուցիոս և Կղեմես պապերի, գերմանական կայսր Ֆրիդրիխ Օիկամորուսի, Եգիպտոսի տիրակալ Սալահադդինի և այլոց հետ: Ավելին, հայ եկեղեցու պատմության ամենադրամատիկ էջերից են Գրիգոր Տղայի անակագրությունը Հաղպատ-Սանահինի հոգևոր միաբանության անդամների, մասնավորապես Գրիգոր Տուտերորդու հետ, 1179 թ. Հռոմկլայի ժողովը և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ Գրիգոր Տղան՝ որպես բանաստեղծական բնատուր տաղանդի տեր անձնավորություն, ոչ միայն ժամանակ է գտել ստեղծագործելու, այլև, ինչպես տեսանք, ջանք ու ժամանակ չի խնայել իր ստեղծագործություններում ծածկագրելու ինքնակենսագրական փաստեր ու տեղեկություններ: Իսկ չանել չէր կարող, որովհետև, եթե բանաստեղծ էր, ուրեմն պետք է ստեղծագործեր, իսկ ստեղծագործությունը այդ ժամանակ պահանջում էր նաև այդօրինակ վարժանքներ ու հնարքներ, որոնք այսօր շատերին կարող են տարօրինակ ու անհասկանալի

¹³ Տե՛ս Գրիգոր Տղա, Աշվ. աշխ., էջ 27:

¹⁴ Ասում ենք «շուրջ քսանամյա», որովհետև թեև հայագիտության մեջ ընդունված է, որ նա կաթողիկոսել է 1173-1193 թթ., բայց, ինչպես սկզբնաղբյուրների քննությունից պարզել ենք, նա պետք է կաթողիկոսած լինի 1175-1193 թթ.: Բանն այն է, որ Ներսես Շնորհալու մահվանից (1173 թ.) հետո, օգտվելով Գրիգոր Տղայի բացակայությունից, կաթողիկոս էր ընտրվել Շնորհալու մյուս եղբորորդին՝ Գրիգոր Ապիրատը, բայց Գրիգոր Տղան կարողացել է ներքին և արտաքին քաղաքական ազդեցիկ ուժերի օգնությամբ Գրիգոր Ապիրատից ետ ստանալ Շնորհալու կտակով իրեն պատկանող կաթողիկոսական գահը (մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նորահայտ փաստեր...):

թվալ, բայց իր ժամանակին այդ ամենը ստեղծագործման պարտադիր պայման ու ատրիբուտ էր: Հետևաբար, եթե բազմազբաղ հոգևոր առաջնորդ, քաղաքական եռանդուն գործիչ, կաթողիկոս բանաստեղծ Գրիգոր Տղան տուրք է տվել ժամանակի ստեղծագործման հրամայականին, ապա, կարծում եմ, զարմանալի ոչինչ չկա, որ նույնը աներ նաև Գրիգոր Նարեկացին, որը որքան մեծ էր Գրիգոր Տղայից իբրև անօրինակ հանճարի տեր քերթող, բնականաբար նույնքան ավելի հարուստ ու կատարյալ պետք է լինեին նրա կիրառած այդօրինակ վարժանքներն ու հնարանքները: Այստեղից էլ առաջին հայացքից անհավատալի թվացող այն բոլոր ծածկագրությունները, այլաբանություններն ու համեմատությունները, ուրոնց մասին ամենատարբեր ձևերով ասում ու հուշում է Նարեկացին ինքը:

Ասվածը, կարծում եմ, լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Տղան իսկապես ոչ միայն քաջածանոթ է եղել Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմին, ոչ միայն կրել է նրա գաղափարական ու գեղարվեստական ազդեցությունը, այլև ընդօրինակել է ինքնակենսագրական փաստերը ծածկագրելու հնարները և նույն ձևով իր ստեղծագործություններում ծածկագրել իր կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող մի շարք փաստեր: Դա հաստատում է մեր այն տեսակետը, որ Նարեկացու Մատյանում իսկապես առկա են ինքնակենսագրական բազմաթիվ ծածկագրություններ, և որ ընդհանուր առմամբ ճիշտ են դրանց վերծանության ուղղությամբ մեր կատարած փորձերը: Իսկ այն հարցը, թե ինչու Գրիգոր Տղան՝ որպես Նարեկացու առաջին գնահատողներից ու հետևորդներից մեկը, շարունակում է նրա հանդեպ «գրեթե անխոս»¹⁵ XI դարի խորհրդավոր լուսության ավանդույթը, դուրս է ներկա հողվածի խնդիրներից: Դա կարող է դառնալ հատուկ քննության առարկա:

Г. К. МИРЗОЯН - Григор Нарекаци и Григор Тга. - Сопоставительный анализ однотипных произведений двух гигантов средневековой армянской поэзии - Григора Нарекаци и жившего в XII веке католикоса-поэта Григора Тга - показывает, что последний, будучи хорошо знаком с литературным наследием Нарекаци, не только испытал идейное и художественное влияние своего великого предшественника, но и воспринял с пониманием присутствующую в «Книге скорби» таинпись и по ее же подобию зашифровал в своем произведении целый ряд автобиографических фактов.

Тем самым, по мнению автора статьи, доказывается факт наличия в «Книге скорби» не расшифрованной до сих пор таинписи и, следовательно, правильность результатов предпринятых им самим попыток частичной ее расшифровки.

¹⁵ Գ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և Ռայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 159: